

ХVII ԴԱՐԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆԸ

Ռաւաւիւր. գիտ. յոկոսուր Հ. Գ. ՌԱՆՁԻՆՅԱՆ

ԱՄԻ դարի առաջին քառորդից, քաղաքական պայմանների բերմամբ, Հայաստանում սկիզբ է առնում տնտեսական ու մշակութային դարձումների շրջան, որը հատկապես ծավալվում է Երևանի, Գլուխարաղի ու Նախիջևանի խանութայիններում։ Այդ դարձումները ներառում է նաև հայկական դադիօշախները (Վիեննայի, Կոստանդնուպոլիսի և այլն), որտեղ համեմատաբար քարե-նպաստ ունեցողների շնորհիվ արդեն նախադրյալներ էին ստեղծվել հայ մշակութային դարձման համար։ Բացվում են նոր հայկական ապարաններ (Նոր Զուլա, Ամսաիրդամ, Մարսիլ), վանական միաբանություններ ու դպրոցներ (Սյունյաց Միծ անտպատր, Էջմիածնի Բարձրագույն դպրոցը և այլն)։ Այս շարժման կաղամկերպին ու առաջնորդն են դառնում առաջին հերթին միմյանց աջակից, հասարակական-քաղաքական կշիռ ունեցող երկու ազգային ուժեր՝ Եկեղեցին և վաճառականությունը։ Նրանց լավագույն ներկայացուցիչները, շփվելով Արևմուտքի քաղաքակրթության հետ, ծրագրեր են մշակում՝ կրթելու, լուսավորելու ժողովրդին և ըստ այնմ նախապատրաստելու նրա ազատագրումն ու քաղաքական-անտեսական անկախությունը։ Այսպիսով, հայ իրականության մեջ սկիզբ առնող վերանորոգչական, կրթական-լուսավորական շարժումը ձեռք է բերում որոշակի ազատագրական նպատակամղվածություն, որի համար հայ վաճառականը ներդնում է իր ոսկին, իսկ հոգևորականը՝ իր մտավոր եռանդը։

Կրթել ժողովրդին և բերել ազգային ինքնագիտակցության՝ նշանակում էր նախ և առաջ առնչել նրան իր բազմադարյան ազգային ավանդույթներին, անցյալի բարձր մշակութային արժեքներին, հաղորդել նրան իր նախնիների հոգևոր հարուստ ժառանգությունը, որից նա կտրվել էր պատմական տխուր հանգամանքների թելադրանքով։ Եվ ահա, գրչագրության ու տպագրության միջոցներով վերականգնանում է միջնադարյան հայ մատենագրությունը, վերածնվում է դասական լեզուն՝ դրաբար։ Ստեղծվում են նաև նոր դրական երկեր, որոնք հաճախ շարունակեցին ու զարգացրին անցյալի գրականությունը և ավանդույթները։ Արձագանքելով ժամանակի պահանջներին ու պատմական իրողություններին, այդ շրջանի գրականությունն այս կամ այն չափով արժարժեց ազգային-ազատագրական շարժումների և հայ վաճառականության դադափարախոսությունը՝ դառնալով կրթական-լուսավորական շարժման հիմնական լծակներից մեկը։

XVII դարի հայ գրականության մեջ գերակշռող դրական սեռը մնում է քնարերգությունը։ Այն զարգանում է երեք հիմնական ուղղությամբ. կոչնահայրենասիրական բանաստեղծություն, աշխարհիկ տաղերգություն և ժողովրդագրությանական երգ։ Այս ուղղությունները, իրենց բնորոշ գծերով՝ անդերձ, միմյանցից խստորեն տարանջատված չեն և երբեմն ներկայանում են փոխազդեցություններով, որպես նույն պատմաշրջանի դեղարվեստական-դադափարական մթնոլորտի արդյունք։ Անգամ նույն հեղինակի ստեղծագործության մեջ հնարավոր է դիտարկել ժամանակաշրջանի բանաստեղծության տարբեր միտումները։ Այսպես, օրինակ, դարի նշանավոր գրողներից մեկի՝ Մարտիրոս Ղրիմեցու դրական ժառանգության մեջ տարբեր չափերով համատեղված են հոգևոր երգը, աշխարհիկ տաղը և աշուղական ոտանավորը։ Ընդ որում, առաջինի լեզուն դրաբար է, երկրորդինը՝ միջին հայերենը, երրորդինը՝ հայատառ թուրքերենը։ Այսուհանդերձ, բանաստեղծական նշված երեք ուղղությունները այդ շրջանի գրականության մեջ որոշակի են իրենց

ժառանգականությունը, լեզվաոճական, պոետիկական հատկանիշներով, թեմատիկայով ու միտվածությամբ:

Կրոնահայրենասիրական բանաստեղծությունը հանդիսանում է զարթոնքի շրջանի հայ քնարերգության ամենալայն և կենսունակ երակը, կրելով իր մեջ աղագային առաջնության բովանդակությունը՝ կազմող լուսավորական և ազգային-ազատագրական միտումները: Այն ընդօրինակում և յուրովի շարունակում է միջնադարյան հոգևոր և պատմաքաղաքական բանաստեղծության հարուստ ավանդույթները, ժանրային համակարգը: Նրա լեզուն հիմնականում գրաբարն է, իսկ ուխավոր թեման՝ կրոնական ու պատմահայրենասիրական մոտիվները: Այդ բանաստեղծության ներկայացուցիչները հիմնականում բարձր կրթություն ստացած մարդիկ էին, որոնք հայրենիքում և ցարթավարներում ղեկավարում էին ազգային մշակութային կյանքը: Նրանց երկերն էլ, որ մեծ մասամբ ունեն ուսուցողական, բարոյակրթական նպատակ ուղղված էին առանձնապես այն լսարանին, որի ունկնդիրները դառնալու էին ժողովրդի հոգևոր առաջնորդները, ուսուցիչներն ու քարոզիչները: Աղագային ու կրոնական հալածանքների ենթարկված ժողովրդին անհրաժեշտ էր վերակրթել հայրենասիրական ու քրիստոնեական ոգով, վերհիշեցնել նրան հայրենի պատմության հերոսական անցքերն ու քրիստոնեական ավանդույթները: Կրոնական ու դավանաբանական խնդիրները, փաստորեն, ձեռք էին բերել նաև շեշտված աղագային-հայրենասիրական բովանդակություն, ուստի և դարձնում էր շրջանի հայ բանաստեղծության հիմնական ուղղությունն ունի կրոնահայրենասիրական բնույթ:

Այս ուղղության մեջ թեմատիկ առումով առանձնանում են կրոնական-խրատական, ազգային-եկեղեցական և պատմաքաղաքական ստեղծագործությունները: Կրոնական-խրատական երկերն առավելապես հետապնդում էին քրիստոնեական գաղափարների վերակենդանացման և ըստ այդմ սերունդներին խրատելու, դաստիարակելու, այլև անհավատների ու այլադավանների դեմ կրոնական ու դավանաբանական պայքար մղելու նպատակ: Ազգային-եկեղեցական բանաստեղծությունն անդրադառնում է լուսավորչական դավանանքի հարցերին, ներքողում ազգային եկեղեցու սրբությունները, հայ անվանի եկեղեցական-մշակութային գործիչներին, նահատակներին, պարսավում ու երգիծում անիմաստասեր, բարոյազուրկ ու դավանափոխ եղած հոգևորականներին: Պատմաքաղաքական բանաստեղծությունն արտացոլում է հայ ժողովրդի անցյալի ու ներկայի ռազմաքաղաքական ու մշակութային իրողությունները, արժարժում հայրենասիրական և ազգային-ազատագրական գաղափարներ:

Կրոնահայրենասիրական բանաստեղծությունը, ինչպես առհասարակ ժամանակի քնարերգությունը, զգալի մասով պահպանում է իր համադրական (սինկրետիկ) բնույթը՝ կապված մնալով երաժշտությանը: Այն յուրացնում է հոգևոր դասական բանաստեղծության հիմնական ժանրերը՝ տաղը և գանձը, որոնք հարմարեցվում էին հայտնի կամ նորաստեղծ եղանակներին: Լայն տարածում են գտնում հատկապես ապաշխարության, օրհնաբանական ու վկալաբանական տաղերը, դամբանական գանձերը: Գոյատևում են նաև բանքերը, ներքողյանները, ողբերը, ստեղծվում են պատմաողբեր և պատմահայրենասիրական բովանդակության շափածո երկեր:

Կրոնահայրենասիրական բանաստեղծության առաջին նշանավոր դեմքը Ներսես Մոկացին է (վախճ. 1625): Նա զարթոնքի շրջանի կրթական-լուսավորական շարժման ջահակիրներից էր. սովորել է Բաղնիշի նշանավոր Ամբրդուլու վանքում, ապա դասավանդել է Սյունյաց Մեծ անապատում, որից հետո հիմնել է Վանա լճի Լիմ կղզու հոգևոր միաբանությունը, ստեղծելով բարձր տիպի դպրոց ու մատենադարան:

Ներսես Մոկացու ազգային-հայրենասիրական երկերից է «Օրհնեալ Տէր Յիսուս Փրկիչ» սկսվածքով ներքողյանը (1621)՝ նվիրված Սյունյաց Մեծ

անապատի հիմնադիրներին՝ Ռանաստեղծը նախ դրվատում է մեղիք Հայկազ-
նին, որի իշխանության ներքո և անմիջական օժանդակությամբ է կառուցվում
այդ վանական-կրթական հաստատությունը՝ Պատմահայր Մովսես խորհնո-
րու «Հայոց պատմություն» հայրենասիրական ոգով համակված Մոկացին իր
հերոսին համեմատում է քաջահաղթ Տիգրանի հետ, գովերգում է նրա մարմ-
նական ուժը, գեղեցկությունը, ռազմական հմտությունը, որոնց զուգակցվում
է հայրենանվեր մեղիքի մտավոր կարողության ու հեղաբարո վարքի դրվա-
տանքը։ Մանրամասն նկրողական գովեստով ներկայացվում են նաև Սյուն-
յաց անապատի մյուս հիմնադիրները՝ Պողոս Մոկացին, Սարգիս եպիսկո-
պոսը և Կիրակոս Տրապիզոնցին։ Ռանաստեղծն այլաբանորեն պատկերում է
լուսավորության այդ անդուլ սերմնացանների աշխատանքի արդյունքը, ըստ
այգամ գեղարվեստորեն արտացոլելով հայ կրթական-մշակութային կյանքի և
ժողովրդի ստեղծարար ոգու զարթոնքը։

Նոր դարձանային հողմունք
Քաղցրասիդ յայդիս հնչեցան,
Եւ ձայն տատրակոց սրբոյ
Մնչինիւ տատէն լսեցան։
Ջմեռն և անձրեք անցին,
Խսառթիւնք սրտից կակղեցան,
Եւ ծաղիկ դարմանադան
Ի յերկրիս մեր երևեցան։

Մեկ այլ հայրենանվեր գործչի՝ Անդրեաս Երեցի նահատակության (1617)
առթիվ ներսես Մոկացին դրել է մի վկայաբանական գանձ և տալի Մուսուլ-
մանական վայրագ բռնությանը ենթարկվող հայ իրականության մեջ հանդես
էին գալիս հավատի նահատակներ, որոնց սրբացումը տակավին անհրա-
ժեշտ էր՝ պահպանելու և ամրապնդելու համար ժողովրդի դարավոր պաշ-
տամունքը, հավատը, որը նրա ինքնության մի առհավատչյան էր։ Ուստի և
ստեղծվում էին նորանոր վկայաբանական երկեր։

Իր գանձի սկզբում Մոկացին նշում է Գրիգոր Լուսավորչի կողմից քրիս-
տոնեական հավատի արմատավորումը հայ իրականության մեջ, Հանուն հայ-
րենյաց հավատի Ավարայրի ճակատամարտում զոհվեցին ժողովրդի լավա-
գույն զավակները։ Հավատի պատերազմը շարունակվում է, և ասպարեզ է
գալիս մի նոր պսակավոր՝ Անդրեաս Երեցը։ Հայոց նոր վկան զարթոնքի
շրջանի ուսումնական է, ժողովրդի լուսավորության գործի նվիրյալը՝

Յընթերցումն արի,
Վարուքն բարի
Եւ առաքինի.
Ջոր դարոց կարդի,
Վարժարան դնի,
Մանկունք ժողովի...2,

Կերտելով հայրենիքի և քրիստոնեական հավատի համար կյանքը զոհա-
բերող հայ հոգևորականի հերոսական կերպարը, բանաստեղծը նպատակ է
ունեցել ոգեշնչել իր ժամանակակիցներին ու եկող սերունդներին, համակել
նրանց պայքարի ու հայրենասիրության ոգով, տեսնել նրանց «ոգով զօրա-
ցեալ, զչարն վանեալ»։

Ազգային եկեղեցական բանաստեղծության մի արժեքավոր օրինակ է
նաև ներսես Մոկացու «Աստուած և Տէրն ամենայնի» սկսվածքով ներբողյա-
-

¹ Ն եր ա ն Ս Մ ո կ ա ջ ի. Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Ա. Դուրխան-
յանի. Երևան, 1985, էջ 29:

² Նույն տեղում, էջ 43:

նր, որն ընդգրկում է շուրջ 1600 տող (Ստեփանոս Շատախեցու լրացմամբ)։ Այստեղ բանաստեղծը շարադրել է Մարիամ Աստվածածնի լեգենդը և նրա պաշտամունքի հաստատումը աստվածամայր Անահիտ դիցունու ավերված բազիլիկների վրա։ Պատահական չէ, որ Մոկացին այսպես հանգամանորեն անդրադարձել է այդ իրողությանը։ Ուշ միջնադարում վաղուց արդեն պետական-քաղաքական հովանավորությունից զրկված և ամեն տեսակ հայածանքների ենթարկված հայ մարդու համար հոգեկան ապավին ու հենարան էր հատկապես պաշտամունքը Աստվածամոր հանդեպ, որպես բարություն խորհրդանշի, որպես Աստծու և մարդու միջև գթառատ բարեխոսի։ Ահա թե ինչու ժամանակի բանաստեղծության մեջ չափազանց մեծ թիվ են կազմում Աստվածածնին նվիրված երկերը։

1622 թ. իր աշակերտների խնդրանքով Ներսես Մոկացին գրել է մի պատմաողբ, որի հիմքում ընկած է 1187 թ. Սալահադդինի կողմից Երուսաղեմի առման և ավերման պատմությունը։ Այդ իրողությանը դեռևս XII դարում անդրադարձել է Գրիգոր Տղան «Վասն առմանն Երուսաղեմի» չափածո երկում։ Թե՛ Ներսես Մոկացու և թե՛ նրա ուսումնասեր պատվիրատուների համար այդ հեռավոր պատմական իրողության գրական վերարտադրումը ամենևին ինքնաբավ հետաքրքրություն չի եղել, այլ որոշակիորեն զուգորդվել է ժամանակի քրիստոնեական աշխարհում և հատկապես Հայաստանում տիրող վիճակին։ Մահմեդականության ծանր լծի տակ հեծող Երուսաղեմը նույն ողբերգական վիճակում գտնվող Հայաստանի խորհրդանշն է եղել, ձեռք բերել մի տեսակ «հոգևոր հայրենիքի» նշանակություն, մանավանդ որ դեռևս վաղ միջնադարից սկսած այն դարձել է հայոց հոգևոր խոշոր կենտրոններից մեկը։ Ըստ այսմ, Երուսաղեմը պատկերող ու գովերգող հայ բանաստեղծների երկերն ունեն ոչ միայն կրոնական, այլև որոշակի հայրենասիրական երանգավորում։ Այսպիսին է, օրինակ, Ներսես Մոկացուն ժամանակակից բանաստեղծ Հակոբ Թոխաթցու (Բաթուկենց, ծնվ. 1563)³ Երուսաղեմին ձոնված տաղը, որտեղ կարդում ենք.

Ցնծութիւն ես դու աշխարհի համայն,
Առաւել Հայոց մեր ժողովրդեան.
Արանց և կանանց, ծերոց և մանկան.
Սուրբ Երուսաղէ՛մ, քաղաքդ անմահն՝

Երուսաղեմի թեմային զանազան առիթներով ու ձևերով անդրադարձել են նաև ժամանակի հայ բանաստեղծներից շատերը։ Ինչպես կտեսնենք, Մարտիրոս Ղրիմեցին գրական մշակման է ենթարկել Երուսաղեմի ավերման աստվածաշնչյան պատմությունը, իսկ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը հնդինակել է Երուսաղեմի սրբությունների մի գովերգություն, որն առանձին պատկերազարդ գրքույկով հրատարակել է իր իսկ հիմնադրած տպարանում (Կ. Պոլիս, 1678)։

Ներսես Մոկացու պատմաողբն էլ կրոնահայրենասիրական բանաստեղծության մի գեղեցիկ նմուշ է, որը համակված է քրիստոնեական միացյալ ուժերով մահմեդական բռնության դեմ պայքար մղելու գաղափարով։ Պատահական չէ, որ Մոկացու այդ երկում ամենից ավելի հաջողված են այլակրոն թշնամու դեմ քրիստոնյա մտրտիկների գոտեմարտի տեսարանները։ Նման հատվածներում հատկապես նկատելի է անցյալի հայ քերթության որոշակի ազդեցությունը.

Իբրև զհուր ընդ եղբայրն՝
Հատեալ զդադմն անցանէին,
Գոռային, խիզախէին,

³ Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխատասիրությամբ Հ. Սահակյանի. հ. 1, Երևան, 1986, էջ 572։

Բաղումք յաճէ սատակելին:
Իւրաքանչիւր հաղար սպանին
Այլն զրիւրս փախուցին⁴:

Նրոսադեմը թեև ի վերջո տվիրվում և մնում է մուսուլմանական լծի տակ, սակայն Արևմուտքի բրիտանական զորքերի կողմից նրա ազատագրման հույսը չի խամրում. Տիրոջ հրամանով նրանք ղեկս պիտի երամով Կան միարանս: Բանաստեղծը փոստորեն արտահայտել է կվրոպացիների կողմից Արևելքի բրիտանական ժողովուրդների, այդ թվում նաև հայության ազատագրման դարավոր լուսաբանքը: Ուտոպիական այդ հավատը գեղես չէր կորցրել իր նախկին ուժը, այլ մինչև Իտալիա Որիի մամանականները և հետագայում էլ հարատևել է հայ իրականության մեջ:

Այսպիսով, ուրեմն, Ներսես Մոկացու ստեղծագործության մեջ արդեն որոշ չափով տեղա է ապրանքահայտական պայքարի տրամադրությունը, որն աստիճանաբար տեղի է համակեր ողջ հայ իրականությունն ու զրահանությունը:

XVII դարի տուրքին կեսին ստեղծվում են նաև մի շարք այլ աղյուսին-հայրենասիրական լուսաբան իրեր: Դարասկզբի ռուսացապետական արյունալի անցքերի թելադրանքով կրեան ևն ղալիս հատկապես պատմաող-րենք, որոնց հեղինակները հիմնականում հայրենի երկրից հարկադրաբար արտագաղթած և օտար ափերում պանդխտության մեջ ապրած ուսումնական մարդիկ են:

1602 թ. շալալիներն ավերում ևն վաճառաշահ Թոխաթ (Նվդոկիա) հայաբաղաբը, և այդ առթիվ արտաշարժ ողբեր ևն հյուսում այդ աղետի ակունատեսներ Ստեփանոս և Հակոբ Թոխաթցիները: Սուաքինն առավել փաստադրաբար, երկրորդն առավել հուղականորեն պատկերում են հայրենի քաղաքի ավերմունքը: Այս ողբերը, սակայն, մոայլ ու հուսահատ չեն, այլ համակաված են հայրենի քաղաքը յոթնապատիկ շքեղ վերակառուցված տեսնելու հավատով: Առհասարակ, պետք է տեսլ, որ լավատեսական ոգին բնորոշ է հայ ողբագրությանը և բնդհանրապես ողջ հայ գրականությանը՝ որպես դարավոր փորձությունների միջով անցած ու իմաստնացած ժողովրդի կենսունակության արտահայտություն:

Ջալալիական շարժումը և դրա հետևանքով հայոց քաղաքների ավերումը, անտերունջ ժողովրդի կոտորածն ու դերեվարությունը առավել լայն կտավի վրա է պատկերել Աղարիա Սասնեղին, որը եղրահանգել է.

Այս ամենայն մեղքն է արել,
Որ անօրէնքն ևն մեղ տիրել:
Մեր թագաւորքն ևն խափանել,
Ձմեղ ի աշխարհս անտէր թողել⁵:

Ինչպես տեսնում ենք, տակավին միջնադարյան մտայնությամբ, հայոց պետականության անկման ու ժողովրդին հասած աղետների պատճառը ավանդաբար համարվում է մեղքը, և փրկությունն էլ, բնականաբար, ակընկալվում է Քրիստոսից (աջի թէ Քրիստոս կամի փրկել):

Շահաբբայուն արշավանքների, 1604 թ. մեծ բռնագաղթի ու սովի հետևանքով Արևելյան Հայաստանում ստեղծված տխուր վիճակն են ողբում Դավիթ Գեղամեցին ու Հովհաննես Մակվեցին: Մեկ այլ բռնագաղթի, որ 1635-ին կաղմակերպել էր սուլթան Մուրադը, առիթով է գրված Հակոբ Ակնեցու «Յաղագս սուրկունին» պատմաողբը: Բոլոր այս պատմաողբերը հորինված են ժողովրդական վիպերգության շնչով և հուղիշ մանրամասնեղով:

⁴ Ն եր ո ս և ս Մ ո կ ա ց ի. Բանաստեղծություններ, էջ 72:

⁵ «Հանդես ամսօրյա», 1936. էջ 333:

Իննադարյան թղթերից ու թղթամուտքերից ոչ պակաս աղետաբեր է եղել կաթողիկոսականությանը ու ճիզվիտների գործունեությունը: Դրա հետևանքով Արեւելյան եկեղեցին հայտնվեց հայտնված, որ մի կերպ փրկվել էր այդ րոնադարյան թղթերից, ու կոտորածներից, աստիճանաբար ենթարկվեց ուժացման: Դրան նպաստեցին նաև դավանափոխ եղած հայ հոգևոր առաջնորդները, հատկապես լեհահայ թեմի առաջնորդ Նիկոլ Թորոսովիչը: Այդ կապակցությամբ ժամանակի նշանավոր մտավորականներից մեկը՝ Սիմեոն Լեհացին (ծնվ. 1584) դրել է «Վիպասանութիւն Նիկօլական» (մոտ 1634) պատմահայրենասիրական երկը: Այստեղ նա ցավով արձանագրել է, որ պետականությունը կորցրած աշխարհասփյուռ հայությունը տառապում է ոչ միայն ալլակրոնների, այլև հավատակիցների ձեռքին: Այլևս չկան անձնավոր ու իմաստուն հոգևոր առաջնորդներ. «Ամենք խմած են ու հարած, Մամոնայի ծառայ եղած»: Հեղինակն այստեղ առաջին հերթին նկատի ունի էջմիածնից փախած և Լիվոնում հանդրվանած աթոռակից կաթողիկոս Մելքիսեդեկին, որը կաշառք վերցնելով, ժողովրդի կամքին հակառակ լեհահայ թեմի առաջնորդ է նշանակում արկածախնդիր Նիկոլ Թորոսովիչին: Կաշառքով ձեռք բերած իր աթոռն ամրապնդելու համար Նիկոլը դավանափոխ է լինում, որը Լեհացու կողմից, իրավամբ, գնահատվում է որպես դավաճանություն հայրենիքի հանդեպ: Հեղինակը հայության տխուր վիճակի պատճառը փորձել է գտնել ավանդական «մեղքի» սահմաններից դուրս: Վերահաս աղետների հիմնական աղբյուրը նա համարում է անմիաբանությունը, որի հետևանքով վերացել է այսոց պետականությունը, դարձել հեռավոր բաղձալի հուշ: Բանաստեղծը զայրագին դատափնտրում է իր ժամանակի ալլասերված, բարոյալքված ու տգեղ հոգևորականներին, որոնք ոչ միայն բարոյապես աղարտված են, այլև տգեղ են ու ապագայնացված:

Զգիտեն բընաւ սահման ուսման,
նո չգիտեն ղեկդուս հայկեան,
նո դինչ կարդան չի հասկանան,
նո գիտողաց վրայ խրոխտանանճ:

«Վիպասանութիւն Նիկօլական» երկը, փաստորեն, խարսխված է այն գաղափարի վրա, որ պետականության չգոյության պայմաններում հայ ժողովուրդն իր ինքնությունը կարող է պահպանել առաջին հերթին լուսավորչական դավանանքի և մայրենի լեզվի միջոցով: Նվ այդ ասպարեզում վիթխարի է հատկապես հայ հոգևորականության դերը: Ահա թե ինչու ժամանակի աղդային-հայրենասիրական բանաստեղծության մեջ այնքան սուր քննադատության են ենթարկվում իրենց կոչմանը չհամապատասխանող, արատավոր կղերականները և, ընդհակառակը, գովերգվում ու փառաբանվում են ժողովրդի առաջընթացին նպաստող հոգևոր գործիչները:

Արատավորված եկեղեցականներին զգաստացնելու համար դարասկզբի անանուն հեղինակներից մեկը գրել է մի այբբենաշար պարսավական տաղ («Անձինք ասեմ հագնեբգական»), որտեղ ժողովրդական բառ ու բանով և առողջ հումորով մեկ առ մեկ նշել ու ձաղկել է նրանց արատները: Ահա ալլասերված հոգևորականության ընդհանուր բնութագիրը.

Վարդապետաց հոյլքըն կրնատ
Սիրեն դդինին՝ ուսեն դարբատ,
Արծաթաւէր են և ժրատ,
Բընաւ լըկամին տեսնուլ դաղքատ՝:

6 Նույն տեղում, էջ 256:

7 Մատենադարանի դիտական նյութերի ժողովածու. հ. 2, Երևան, 1949, էջ 191:

Նույն ժամանակի մեկ այլ պարսավական տաղի մեջ անանուն հեղինակը ուղղակիորեն մեղադրում է հայ հոգևոր առաջնորդներին՝ մերկացնելով նրանց հակաթողութրական էությունը: Ընչաքաղց ու երեսպաշտ հոգևորականները «խանգարիչ առաջնորդք» են և «վաճառականք լինին բանին»: Նման օրինադանց հոգևորականներին է պարսավում նաև Հակոբ Ասեցին 1624 թ. գրած իր մի տաղում, ուր ներկայացված է հայ կղերականությունը վերից վարի, իրար հետ անընդհատ գծումք են Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքները, անիրավություններ ու շահատակություններ են անում օսմանցու կերպարանք առած նվիրակները, «վարդապետքն այլ քարոզող չեն, ժողովրդեան կաշառք խնդրեն»: Առավել սանձարձակ են եկեղեցու ցածրաստիճան պաշտոնյաները, որոնք «լի են շարաք, շունին բարի»: Ասեցին պարսավում է նաև որոշ աշխարհիկ տերերի, որոնք նույնպես «Ըղկաշառքն արմաղան կոչեն, շտոողին բոխտան դենն»: Այս պայմաններում, ահա, ժողովրդի մի մասը ևս այլասերվում է, հավատափոխ լինում, հեռանում նախնյաց օրենքներից, վարք ու բարքից («Աֆիոն կլնուն, թութուն խմեն և գաղ ու հացն ապականեն»)Ց, Եվ այս ամենը բանաստեղծին իրավամբ համարում է աղգային ողբերգություն, ավաղելով հայոց մեծ աղգին:

Այսպիսով, ուրեմն, ժամանակի բանաստեղծների կողմից օրինադանց հոգևորականության (այլև աշխարհիկ տերերի) քննադատությունն առաջին հերթին նպատակ է ունեցել պահպանել ու պաշտպանել հայրենյաց կարգերը, նպաստել ժողովրդի լուսավորությանն ու ինքնությանը: Նույն նպատակն են հետապնդել նաև հայ եկեղեցական-մշակութային առաջավոր գործիչներին ձոնված տաղերը, գանձերն ու ողբերը:

Վերը հիշված ողբագիր Ստեփանոս Թոխաթցին հեղինակել է մի ներբողական տաղ նվիրված իր վաղամեռիկ եղբորը՝ Հակոբ քահանային: Ուշագրավ է, որ բանաստեղծն այստեղ ողբում է ոչ այնքան իր հարազատի, որքան անձնվեր մշակութային գործչի կորուստը: Հակոբը եղել է հմուտ գրիչ, ճարտասանության, քերականության և աստվածաբանության քաջագիտակ մանկավարժ, որին Ստեփանոս Թոխաթցին ներբողյաններին հատուկ չափազանցություններ համեմատում է Արիստոտելի, Պլատոնի, Եվսեբիոսի, Պորփյուրի, այլև Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի հետ: Այնուհետև տալիս է նրա բարոյական, ապա նաև արտաքին նկարագիրը, ստեղծելով իդեալական հայ մտավորականի մի ավարտուն կերպար:

Կամար ուներ, աչին՝ ծովեր,
Քաղցրատեսիլ նա դիմօք էր,
Մօրուքն թուխ պատկերօք էր,
Ոսկեբերան ինքն նմանէր,
Եկեղեցւոյն նա պարծանք էր,
Ջահ և լապտեր, կանթեղ, մոմ էր,
Լուսով ճրագ, աշտանակ էր,
Ջամենեսնան լուսաւորէրՑ:

1607 թ. Սրապիոն (Գրիգոր) Ուռհայեցի կաթողիկոսի մահվան կապակցությամբ մի ողբ է հյուսել Մովսես Տաթևացին, որին վիճակված էր տարիներ հետո ժառանգել հայրապետական գահը: Իր ողբը Տաթևացին հորինել է երախտագետ աշակերտի անկեղծությամբ, բարձր արվեստով ու հայրենասիրական շնչով:

Վերջացեալ ժամուս ճրագ՝ լուսատու՝ ուժգնակի հողմով դիմող ղու շիշար,
Տարածեալ մտաց շուժմունք քո գրոց, զիմող դադրեցար,

Ց Նույն տեղում, էջ 193—194:

9 Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հ. 1, էջ 505:

Բարունաց պարծանք, գլուխ Հայկազան, զիա՛րդ դու անկար,
Ցնծութի՛ւն Հայոց, պարծանք աշխարհաց, զիա՛րդ բանտեցար¹⁰:

Հիշատակելի է նաև Խասպեկ Խաչատուրի (1610—1686) հեղինակած ընդարձակ վկայարանական տաղը, ուր ներկայացված է 1642-ին Ղրիմի Ղա-րասու քաղաքում թուրքերի կողմից սպանված ոման Սարգսի նահատակության պատմությունը: Խասպեկն իր տաղը կառուցել է միջնադարյան վկայարանու-թյունների հետևությունների, բերելով որոշ նոր երանգներ: Նրա հերոսը, որ ուսումնասիրում է կենսուրախ մի պատանի է, որքան էլ կապված է կյանքին ու սարսափում է մահից, բայց անտրտունջ գնում է դեպի կախաղան, չցան-կանալով ուրանալ նախնյաց հավատը: Իսկ դա առաջին հերթին նշանակում էր տեղի շտալ բռնությունը, պահպանել ազգային ու մարդկային արժանա-պատվությունը:

XVII դարի հայ բանաստեղծության մեջ մեծ տեղ են գտնում քաղաք-ների, վանքերի և այլ բնակավայրերի գովք-նկարագրությունները: Պատկե-րելով ու դովբեղելով հատկապես հայկական և հայաշատ բնակավայրերն ու կառույցները, բանաստեղծները հաճախ արտահայտել են իրենց հայրե-նասիրական զգացումները, հայրենաբաղձությունն ու նվիրական տենչերը: Դարակեսին հանդես եկած բանաստեղծ Արիստակես Խարբերդցին մի ներբողական տաղ է նվիրել Եղեսիային (Ուռհա): Հեղինակը գտնվել է ներ-սես Շնորհալու նշանավոր «Ողբ Եղեսիոյ» պոեմի ազդեցության տակ և գրե-թե նույնությամբ փոխառել նրա որոշ տողեր ու պատկերներ: Խարբերդցին էլ Եղեսիան նմանեցրել է բազմազավակ մոր, որը սնուցում է իր դուստրի-րին ու որդիներին: Եվ բանաստեղծն ավելի շատ անդրադառնում է Եղեսիո զավակներին, ի դեմս տեղի հայ հոգևորականության ու խոջաների, գովա-բանելով ու բարի մաղթանքներ անելով նրանց: Ըստ այդմ նա ձգտել է ոգեշնչել օսմանյան բռնապետության տակ ապրող եղեսահայության հոգե-վոր ու աշխարհիկ տերերին՝ աննկուն մնալ ռոնաւորաց առաջի»:

1631 թ. գրչադրված մի ժամագրքի մեջ պահպանվել է մի փոքրիկ դրը-վատական տաղ՝ ձոնված Կամենեց-Պոդոլսկ քաղաքին: Դեռևս XIV դարից այդ քաղաքում գոյություն է ունեցել բավական աշխույժ տնտեսական-մշա-կութային կյանքով ապրող հայկական համայնք, որի ինքնության պահպան-ման բաղձանքով է հյուսել անանուն հեղինակն իր այդ տաղը: Այստեղ լա-վագույնս ներհյուսված են կրոնասիրական ու հայրենասիրական զգացում-ները:

Ո՛վ աստուածապահ քաղաքդ մեծ Կամենից,
Ի քառից կողմանց պատեալ յորդահոս վրտակից,
Անառիկ ամրոց շինեալ ի վերայ վիմի,
Օրհնութիւն աստուածային ի քեզ ծաւալի:
Ազդ հայկազեան դարմի, որ ի քեզ բնակի,
Հաստատեալ յուսով սիրով սուրբ Լուսաւորչի,
Պահեսցէ Տէր հաստատուն և անշարժելի,
Պայծառ լուսաւոր դիմօք և անդրդուռելի,
Արգոյապատիւ պերճամբ բարգաւաճելի,
Եքեղազարդութեամբ փայլեալ, որ կան ի մարմնի:
Տիրամա՛յր ամենասուրբ Աստուածածին,
Բարեխօսեա՛ Միածնի վասն այս քաղաքի,
Մանաւանդ փոքրիկ հօտի հայկական դարմի,
Որ կան հաստատեալ սիրով Փրկչին Յիսուսի¹¹:

¹⁰ Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը. հ. 2, Երևան 1987, էջ 72:

¹¹ Ղ. Ալիշան. Կամենից. Վենետիկ, 1896, էջ 184:

Հիշարժան է նաև խաչատուր Թոխաթցու (Ծվղոկացի) 1614 թ. գրած «Պատմութիւն Վենետիկ քաղաքին» պատմագեղարվեստական շափածո երկրորդ Այստեղ հեղինակը հաճախ դրսովիլ պատկերներով ու վարակիչ անմիջական-նությամբ նկարագրում է եվրոպական այդ մեծահամբավ քաղաքը, նրա կառույցները, բնակիչներին, նրանց նիստուկացրւ Այս տարագիր հայի համար վենետիկցիների ապրելակերպի ողորդ կողմեր ծիծաղելի և անընդունելի են եղել, սակայն ընդհանուր առմամբ նա հակամետ է եղել դեպի եվրոպական քաղաքակրթութունը, որը գովերգելով, նա, ըստ էության, փայփայել է իր ժողովրդի դարգացման ու լուսավորման գաղափարը: Ըստ երեւոյթի նույն տյո՛հ հույսերն է փայփայել նաև ավելի ուշ հանդես եկած բանաստեղծ Հակոբ Գրիգորենցը, գրելով իր «Գովք Պրիթանիոյ» երկը: Լինելով Լոնդոնում և Օքսֆորդում, այս հայ քահանան, թեև շատ պարզունակ և անաբովեստ, բայց մեծ հիացմունքով նկարագրել է եվրոպական այդ առաջավոր երկրի պետական կառուցվածքը, մեկ առ մեկ նշելով ու գովերգելով բրիտանական հասարակութունը կազմող խավերը:

Հայրենասիրական բանաստեղծության մի ինքնատիպ նմուշ է ժամանակի մեծանուն փիլիսոփա Սիմեոն Ջուղայեցու (վախճ. 1658) տաղը, ուր տարագիր հայը, հանձին իրեն, ողբում է իր հայրենիքի ու ժողովրդի անելվիճակը.

Ես էի ազատ ազգի,
Վա՛յ, աւա՛ղ, վա՛յ,
Եւ այժմ եմ ալոց ղերի.
Եկայք լացե՛ք ղիս
Եւ ողբացե՛ք ղիս:
Կողոպտեց ղիս թշնամին,
Վա՛յ, աւա՛ղ, վա՛յ,
Եւ արար կոխան ոտից.
Եկայք լացե՛ք ղիս
Եւ ողբացե՛ք ղիս¹²:

Երբևէ ազատ ազգի զավակը հիշելով իր երանելի անցյալը և տեսնելով ավաղելի ներկան, փորձում է որևէ ելք գտնել («Զլեւս աստի յուղեմ գտանել»), որևէ սատարող ձեռք, բայց ապարդյուն, ուստի և նրան մնում է սոսկ ողբալ և իր ցավը հայտնել հայրենակիցներին:

Երանելի անցյալի և տխուր ներկայի ավանդական հակադրության վրա են կառուցված նաև ժամանակի ողորդ անանուն երգեր: Դրանցից մեկը, որ մեր կարծիքով հորինված է XVII դարի սկզբներին, նվիրված է Վարդանանց հիշատակին և հայրենասիրական ողբի մի գեղեցիկ նմուշ է.

Իսկապէս եկայք լացցուք աղետարշ սրտիւ ողբական,
Վայ և եղուկ կարդասցուք ի վերայ ազգիս հայկական.
Ղեկավարքն մեր նարտարք, ո՞ւր են քաջ իշխանքն Հայոց,
Յազգէս մերմէ սպառնցան, և եղաք այլ աղգաց փողոց,
Արին և քաջն Վարդան՝ վանողն պարսից արքային,
Սիրովն Յիսուսի վառեալ, որ եմուտ ի հանդէս մարտին,
Զօրեղ զօրականըն սուրբ՝ կորովին և քաջըն խորէն,
Ճոճել ճապուկ նիզակին քաջապէս զօրացաւ անդէն¹³:

Ժամանակի կրոնահայրենասիրական բանաստեղծությունն արտահայտվել է նաև շափածո ձևագրական հիշատակարանների միջոցով: Հիշարժան է Հակոբ Բաթուկենցի 1627 թ. տաղաշափած սաղմոսների գրքի հիշատակա-

12 Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հ. 2, էջ 262:

13 Ա. Զ ո պ ա ն յ ա ն. Հայ էջեր. Փարիզ, 1922, էջ 13:

բանը, որտեղ խոսելով քրիստոնեական հավատի և եկեղեցական կարգերի տարածման մասին, հեղինակը հպարտությամբ նշել է, որ հայ ժողովուրդը հնուց ի վեր հետևել է քրիստոնեական ուսմունքին և ստեղծել իր խիստ ինքնուրույն եկեղեցական մշակույթը: Ձեռագրերի հիշատակարաններում հատկապես եկեղեցական գրքերը զնահատվում են որպես պայքարի միջոց ընդդեմ այլակրոն թշնամիների և հանուն ազգային ինքնության պահպանման:

Զարթոնքի շրջանի ականառու դեմքերից է Մարտիրոս Ղրիմեցին (վախճ. 1683): Նա վարել է եկեղեցական բարձր պաշտոններ, եղել է Պոլսի և Նուսահեմի հայոց պատրիարք, Ղրիմի թեմի առաջնորդ: Մեծ և ազդեցություն դեր է կատարել թուրքահայ և ղրիմահայ թեմի սոցիալական, քաղաքական ու մշակութային կյանքում: Մավալել է մանկավարժական, քարոզչական արդյունավետ գործունեություն, զբաղվել է գրչությամբ ու գրահավաքչությամբ, բարեկարգել է հայկական եկեղեցիները, պայքարել կաթոլիկացման դեմ: Թողել է նաև բավական ծավալուն գրական ժառանգություն:

Ազգային-եկեղեցական միասնություն և ժողովրդի լուսավորություն. հիմնականում այս գաղափարներով է առաջնորդվել Մարտիրոս Ղրիմեցին իր գործունեության ընթացքում և նույն այդ գաղափարներն է արժարժել իր ստեղծագործության մեջ:

Որպես բանաստեղծ, Մարտիրոս Ղրիմեցին լայն հետաքրքրություններ և ազատ, անկաշկանդ միտք է դրսևորել: Նա ձգտել է բավարարություն տալ օրվա հրատապ հարցերին, հասարակության ամենալայն շերտերի գեղագիտական պահանջմունքին, ստեղծելով ամենատարբեր բնույթի լափածո և արձակ գործեր: Սակայն նա առաջին հերթին կրոնահայրենասիրական բանաստեղծության խոշոր ներկայացուցիչ է:

Մարտիրոս Ղրիմեցու պատմաքաղաքական երկերից է «Ողբ Երեմիայի» եղերերգությունը, որն Երեմիայի աստվածաշնչյան հայտնի ողբի մի յուրօրինակ գրական մշակումն է: Ինչպես ներսես Մոկացին, Մարտիրոս Ղրիմեցին էլ ի դեմս ավերվող Նուսահեմի այլաբանորեն ցուցադրում է իր ժամանակի Հայաստանի պատկերը: Աստվածաշնչյան ողբի համեմատ Ղրիմեցու երկն ունի առավել սուր շեշտեր և առավել մարտական ու լավատեսական բնույթ: Ահա թե ինչպիսի վրեժխնդրությամբ է նա պահանջում Աստծուց «ճռաքաղ անել» իր ժողովրդի թշնամիներին:

Վրդարադատ իսկ իրաւամբդ հատո՛ւ նոցա,
Ըստ պնդութեան կարծրացելոյ սրտից նոցա:
Հալածեսցես սրտմտութեամբ քով զնոսա,
Ներքոյ երկնից քով բարկութեամբ իսպառ ջնջեա՛ւ¹⁴:

Սա, հիրավի, դարի ոգու և ազգային-ազատագրական տրամադրությունների արգասիք էր: Այդպիսին է նաև Ղրիմեցու «Կարգ և թիւ թագաւորաց ազգիս հայոց» պատմագեղարվեստական երկը (1672): Այստեղ հայ և օտար պատմագիրների հաղորդած տվյալների հիման վրա շարադրված է հայկական պետականության պատմությունը, սկզբից մինչև Կիլիկյան թագավորության անկումը: Ղրիմեցին առանձին հպարտությամբ ու բերկրանքով է հիշատակում հատկապես հայ մեծագործ գահակալներին: Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» հետևելով նաև հայրենասիրական շնչով է գրված, օրինակ, հետևյալ հատվածը.

Այս Վաղարշակ ծնանի զարին
ՋԱՐՂԱԿ ԵՐՐՈՐԴ զարմանալին,
Որ ըզՊոնտոս գերեաց յուժգին,

Կանդենացի դարձան յեղր ծովին,
 Եւ դայն ծակեալ թափանցուցին
 Զնոնոց արեամբ մխեալ տիդին.
 Աղղն յունաց երբ դայն տեսին,
 Իրր Աստուծոյ երկրպագին...15:

Վերարտադրելով հայ ժողովրդի փառավոր անցյալը, Ղրիմեցին նպատակ է ունեցել դարձնել դա «օրինակ անվրէպ» և իր ժամանակակիցներին մեջ բորբոքել աղգային արժանապատիւթյան ղդացումը, բարձրացնել նրանց ազգային ինքնագիտակցութիւնը, վարակել հայրենասիրութեամբ և առաջ քաշել անկախ պետականութեան գաղափարը:

Պատմաքաղաքական բանաստեղծութեան ուշագրավ նմուշ է նաև Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» երկը (1672): Այստեղ շարադրելով իր ծննդավայր Ղրիմի քաղաքական պատմութիւնը, բանաստեղծը հիմնականում անդրադառնում է տեղի հայկական գաղթօջախին: Դառնորեն արձանագրելով հայկական պետականութեան անկման և հայութեան տարագրման տխուր իրողութիւնը, նա որպէս թախծոտ, բայց և ոգեշնչող վերհուշ, հիշատակում է կործանված քաղաքամայր Անին: Վերջինիս կործանումից հետո (1331 թ.) բազում հայեր հաստատվում են Ղրիմում, շենացնելով այն, լցնելով հոյակապ կառույցներով, վայելչագեղ տաճարներով ու ամրոցներով՝ «եռեակ պարսպեան»: Դարեր շարունակ համախմբված մարտնչելով ընդդէմ «այլասեռ թշնամեաց», հայերը գոյատևում են Ղրիմում, պահպանելով իրենց ազգային ու կրոնական անկախութիւնը: Այդ փաստը բավական ոգևորութեամբ է արձանագրում ղրիմեցի բանաստեղծը.

Ջարմք և սերունդք նոցին մինչև ցայսօր կան,
 Մաղկեալք են ի հաւատ քրիստոնեութեան,
 Յիշատակին ղնախնիսն, դճառնէ ղոհանան,
 Սրբոյ Երրորդութեան յաւէտ փառս տան16:

Մարտիրոս Ղրիմեցին ներբողական տաղեր է ձոնել Անկարայի Ս. Աստվածածնի հայոց եկեղեցուն, Ամասիա հայաքաղաքին: Ինչպէս հայտնի է, վերջինս եղել է Պոնտական թագավորութեան կենտրոնը, որտեղ նրա հիմնադրման ժամանակներից բնակվել են Քաջատոհմ որդիք հայկազնեայ: Գեղեցիկ կառույցներով ու փարթամ այգիներով զարդարված այդ վայելուչ քաղաքի տերը, սակայն, այլևս քաջարի հայկազունները չեն, որոնց ստեղծարար բազկով պիտի շատ ավելի շքեղանար ու բարգավաճեր այն.

Թէ ինձ հրաման լինէր,
 Կապէի կամուրջ քո վերայ,
 Եւ նշդարենի ծառոց
 Տերևով ծածկոյթ սաղարթեայ...
 Ներքին շատրվան ծովակ
 Շինէի սալից մարմարեայ.
 Յորդառատ աղբերց նըման,
 Խիտ առ խիտ բխմամբ ցողանայ...17:

Ղրիմեցին հեղինակել է նաև պարսավական տաղեր՝ ուղղված Ահյուլ և Պուրղազ քաղաքներին, որոնք անհյուրընկալ և անողորմ են եղել այնտեղ գաղթած հայերի հանդեպ: Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում «Արքանեակ շարին» սկսվածքով այբբենաշար անեծքը: Հնգավանկ հատուտողերով ասված այս անեծքների շարքն ուղղված է բոլոր նրանց, ովքեր

15 «Հանդես ամսօրյա», 1965, էջ 49:

16 Ա. Մարտիրոսյան. Մարտիրոս Ղրիմեցի, էջ 152:

17 Նույն տեղում, էջ 132—133:

շեղվել են լուսավորչական դավանանքից և ընդունել կաթոլիկություն: Կաթոլիկացումը հատկապես հայրենի հողից կտրված հայության համար, ինչպես նշեցինք, ուժացման ստույգ պայման էր, ուստի և հայրենանվեր բանաստեղծն ու ազգային-եկեղեցական գործիչը այդ շարիքը ձգտել է դատափետել խոսքի ամենահարկու միջոցով՝ անհծքով:

Մարտիրոս Ղրիմեցին հեղինակել է նաև մի քանի երգիծական տաղեր, որոնց մեջ ծաղրել ու պարսավել է ժողովրդի զխին պատուհաս դարձած և նրա առաջընթացն արգելակող հոգևորականներին: Բանաստեղծն այն միտքն է զարգացրել, որ բարոյագուրկ քահանան նաև ապագային երևույթ է՝ «Ո՛չ հայ, ո՛չ թուրք և ո՛չ մուհուտ»:

Երեսպաշտ Տարսյուֆի հայկական տարբերակն է Ղրիմեցու նկարագրած Դավիթ երեցը, որը բարեպաշտի դիմակ հագած, գուրում է մարդկանց.

Կեղծուկ շրջիս սևուկ շալով,
Փարիսեցի ձեանալով,
Պատմագիրք կու կարդաս լալով,
Քո արտասուաց ծո՛րն անխժած:

Դու լես երէց, ցցի պատ ես,
Զօրն ի բուն արին կու լակես,
Գիր դրելով մարգ կու խաբես,
Քո կաղմարին մո՛րն անխժած¹⁸:

Մարտիրոս Ղրիմեցու ստեղծագործական սկզբունքներից է եղել «Զվատ-թարն չար ասել», «Եւ գեղեցկաց տալ գովասան»։ Ուստի և նա մի կողմից պարսավել ու երգիծել է արատավոր քահանաներին, մյուս կողմից՝ գովելով նրանց արքային, ու հայրենանվեր եկեղեցականներին:

Ասենք նաև, որ Ղրիմեցին ուսուցողական նպատակով չափածոյի է վերածել Հին և Նոր կտակարանների պատմությունը և ամբողջ Հայսավորքը: Նույն նպատակով գրված իր մեկ այլ ստեղծագործության մեջ նա քարոզիչ վարդապետների համար կազմել է օրհնության օրինակելի ձևեր, որոնցից մեկում իր հայրենակիցներին այսպիսի մաղթանք է արել.

Ղամբարամբ լուսոյ շափղ ձեղ բացցի,
Զեկ և ձերային աղագց և դարմի...
Ընդ լուսաւորին ընտրելոց զարմի
Երամք ձեր խմբեալք ի մի գումարի¹⁹:

Այստեղ բանաստեղծն արտահայտել է հայ ժողովրդի լուսավորության ու համախմբման վերաբերյալ իր տենչերը, որոնց իրագործման համար նա ի սպաս է դրել իր ողջ հոգևոր ու ֆիզիկական եռանդը:

Մարտիրոս Ղրիմեցին ստեղծագործել է այն ժամանակահատվածում, երբ հայ իրականության մեջ բավական ծավալվել էր կրթական-լուսավորական գործը, և Հայաստանի ազատագրության նկրտումներն արդեն արտահայտվում էին միջազգային դիվանագիտական բանավարություններով: Ահա այդ ժամանակաշրջանի ոգու արտահայտությունն է նրա կրոնահայրենասիրական բանաստեղծությունը:

XVII դարի երկրորդ կեսին կրոնահայրենասիրական բանաստեղծության որոշ նմուշներ է ստեղծել նաև Մինաս Ամդեցին (վախճ. 1704): Նա ևս եղել է եկեղեցական-մշակութային նշանավոր գործիչ. ընտրվել է Երուսաղեմի հայոց պատրիարք: Զբաղվել է գրչագրական ու հրատարակչական աշխատ-

¹⁸ Նույն տեղում, էջ 94:

¹⁹ Նույն տեղում, էջ 173:

տանքով, հեղինակել պատմագրական երկեր: Նրա անունով հայտնի տաղերը ուղ միջնադարի հայ ներքողագրության ուշագրավ օրինակներից են, որոնց մեջ տեսնում ենք ժամանակի ազգային-մշակութային գործիչն՝ իր հայրենասիրական ու լուսավորական գաղափարներով: Ամդեցին զովերգել է անցյալի և իր ժամանակի հայ անվանի ուսուցիչ-վարդապետներին, արժանին մատուցելով հայ դպրության երախտավորներին:

Չուրբըն Գրիգոր մեծ պարթևեան,
Որդովք թոռամբքն իւրական,
Երկու ներսէսքն մերազեան
Ջահ են մեղի անշիշական:
Նաեւ Մխիթար Գոշ կոչական,
Իւր աշակերտն Վանական,
Վարդան, ներսէս որդիք Նոցայն,
Մեծն ներսէս Նիշ դատուեան²⁰:

Իր մի տաղում ներքողելով Հակոբ կաթողիկոս Զուղայեցուն, Միսաս Ամդեցին, ի հեճուկս անշատվողական նկրտումներ ունեցող հոգևորականների, ներկայացնում է նրան որպես ամենայն հայոց հոգևոր առաջնորդի, որը «Լուսաւորչի նման փայլեալ Պարսկաստանա մինչ ի Լեհին»: Ազգանվեր ու ազգօգուտ գործունեություն ծավալած կաթողիկոսն այստեղ համեմատվում է ոչ միայն Գրիգոր Լուսավորչի, այլև անցյալի խոշորագույն հայ եկեղեցական ու մշակութային գործիչների հետ, որով ընդգծվում է ժողովրդի թե՛ եկեղեցական և թե՛ մշակութային միասնությունը:

Հակոբ Զուղայեցի կաթողիկոսին զովերգել է նաև ժամանակի մեկ այլ եկեղեցական, մշակութային գործիչ, Ղրիմի հայոց հոգևոր առաջնորդ Վարդան Կաֆացին (վախճ. 1712): Վերջինիս տաղերի զգալի մասը գրված է Ղրիմի հայոց եկեղեցիների վերանորոգության առթիվ և ունի թե՛ կրոնական և թե՛ պատմաքաղաքական բնույթ: Վարդան Կաֆացին ևս առաջնորդվել է եկեղեցական և ազգային միասնության գիտակցությամբ, Ղրիմի վանքերը դիտելով էջմիածնի մայր տաճարի և հայոց մյուս նշանավոր հոգևոր կենտրոնների կողքին: Հայրենաբաղձ տարազիր հայության համար եկեղեցին ոչ միայն հավատի տաճար էր, այլև հայրենի սրբությունների հավաքական ամբողջություն, հայրենիքի խորհրդանիշ:

Վարդան Կաֆացու տաղերում նկատելի է հոգածու հոգևոր հովվի և հայրենասեր բանաստեղծի անկեղծ սերն ու խանդաղատանքը հայրենի հողից հեռու, Ղրիմի քաղաքներում հաստատված իր հայրենակիցների նկատմամբ: Դիմելով նրանց, բանաստեղծը մաղթում է.

Խաչեալ Աստուած պատարագի
Խաղաղութիւն տալ աշխարհի,
Միշնորդութեամբ քահանայի
Ձեր թշնամիքն կործանի²¹:

Ահա թե ինչպիսի դեր էր հատկացվում Աստծու և ժողովրդի միջնորդ համարվող քահանային: Ժամանակակիցների համար նման քահանայի տիպար է եղել կաֆացի մեկ այլ տաղասաց, կրթական-մշակութային գործիչ Խաչատուր Խասպեկը, որի մահվան կապակցությամբ (1686 թ.) ներքողական ողբեր են գրել նրա համաքաղաքացի տաղասացներ Հովհաննեսը և Սիմեոնը: Հատկանշական է վերջինիս այն միտքը, թե

Թէպէտ ամենեցուն մահն է դառնագոյն,
Բայց իմաստնոցն ա՛յլ է կսկիծ կարծրագոյն²²:

²⁰ «Հանգես. ամսօրյա», 1960, էջ 338:

²¹ Ուղ միջնադարի հայ բանաստեղծությունը, հ. 2, էջ 158:

²² Նույն տեղում, էջ 194:

Դարի երկրորդ կեսին էլ ստեղծվել են մի շարք շափածո վկայաբանություններ ու վկայաբանական տաղեր: Երկու վկայաբանական տաղի հեղինակ է ոմն Միքայել, որը մանրամասն նկարագրել է 1677-ին Դավիթ Սեբաստացու և Գասպար Կովանի նահատակությունը: Գասպար Կովանը մահմեդականություն ընդունած հայ ծերունի էր, որը Դավիթ Սեբաստացու նահատակությունից հետո վերստին դարձի է գալիս, թողնելով «զձեն տաճկի»: Ըստ էության, դավանանքը լիովին նույնացել էր ազգային պատկանելությանը, ուստի և «մահմեդական» ես, թե՞ քրիստոնյա» հարցին փոխարինում է «Տաճիկ ես, թե՞ հայ» ձևը: Գասպար Կովանը, որ կրթված էր և տեղյակ նախնաց պատմությանը, ազգային արժանապատվության զգացումով պատասխանում է՝ «Ես հայ եմ ի վաղուց քրիստոսադաւան»²³:

Հիշարժան է նաև ժամանակի տաղանդավոր բանաստեղծներից մեկի՝ Դավիթ Սալաձորցու (ծնվ. մոտ 1625) մի տաղը՝ գրված խաթուն անունով մի հայուհու հավատափոխության առիթով: Ջերմությամբ ու սրտացավությամբ զրուցելով «մոլորեալ» տիկնոջ հետ, բանաստեղծը փորձում է նրան համոզել, դարձի բերել, բացատրելով ու ցույց տալով նրան քրիստոնեական հավատի և լուսավորչական դավանանքի առավելությունը: Նա ևս դավանանքն ու ազգությունը դիտում է միասնության մեջ, ձգտելով արթնացնել հավատափոխ տիկնոջ, ընդ մահի նաև մյուսների ազգային գիտակցությունն ու արժանապատվությունը:

Որպես ակն ու զոհոր, մարգարիտ մանր է,
Նոյնպէս հայն փոքր ազգ է և գինն ծանր է²⁴:

Այս տաղը ժամանակի հայրենասիրության լավագույն գեղարվեստական արտահայտություններից է, որի արմատները հասնում են մինչև հայոց Ոսկեդար, մինչև քերթողահայր Մովսես խորենացու ազգային բարձր գիտակցությունը:

Ազգային հայրենասիրական բանաստեղծության խոշոր ներկայացուցիչ է Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը (1637—1695): Նա ստացել է հիմնավոր կրթություն, տիրապետել հունարենին, լատիներենին, թուրքերենին ու եվրոպական որոշ լեզուներին: Պատանի հասակում արդեն հրաժարվել է հոգևոր կոչումից և ապրել աշխարհականի կյանքով: Գործուն մասնակցություն է ունեցել արևմտահայության քաղաքական, եկեղեցական ու մշակութային կյանքին: Նա ևս պայքարել է հանուն հայ ժողովրդի լուսավորության, եկեղեցական ու քաղաքական միասնության, լուսավորչական դավանանքի ամրապնդման՝ փայփայելով Հայաստանի ազատագրման ու հայկական պետականության վերականգնման հույսերը:

Երեմիա Քյոմուրճյանից մեզ է հասել բավական ժավալուն դրական ժառանգություն, որը բաղկացած է պատմական, կրոնադավանաբանական, աշխարհագրական, գեղարվեստական, տոմարական, հուշագրական և այլ բնույթի արձակ և շափածո բազմաթիվ երկերից: Նա թարգմանություններ է կատարել հունարենից ու լատիներենից, հայատառ թուրքերեն է թարգմանել մի շարք հայերեն աղոթքներ, քարոզներ, հատվածներ Հին կտակարանից, նոր կտակարանը, համառոտ Հայսմավուրքը, Ալեքսանդր Մակեդոնացու, Փարիզի և Վիեննայի պատմությունները և այլն:

Քյոմուրճյանը գրել է թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ բովանդակության բանաստեղծություններ: Սակայն նրա քնարերգությունը ևս, ինչպես իր ուսուցիչ Մարտիրոս Ղրիմեցուն, առավելապես պատկանում է կրոնահայրենասիրական բանաստեղծությանը:

²³ Նույն տեղում, էջ 598:

²⁴ Նույն տեղում, էջ 363:

Երեմիա Չելեպիի գրական ժառանգության մեջ թերևս ամենանշանակալիցը «Պատմութիւն Համառօտ Դժ տարւոյ օսմանցոց թագաւորացն» երկն է՝ գրված 1675—1678 թթ.։ Այս ծավալուն (3622 տող) պատմական քերթվածի մեջ հայկական և թուրքական աղբյուրների հիման վրա շարադրված է օսմանյան թագավորության պատմությունը սկզբից մինչև 1670-ական թթ. (վերջին երեսնամյակի դեպքերը հեղինակը շարադրել է որպես ականատես ու ականջալուր)։ Բանաստեղծ պատմագիրը մեկ առ մեկ անդրադարձել է այդ 400-ամյա ժամանակաշրջանում գահակալած օսմանյան 19 սուլթաններին, նրանց օրոք տեղի ունեցած ռազմաքաղաքական խոշոր անցուդարձերին, Հեղինակը ցույց է տվել, որ թուրքերը Փոքր Ասիայում եկվոր են և ոչ թե «հիմն և արմատ», ինչպես դեռ այն ժամանակներից փորձել են հավաստիացնել նրանք։ Իսկ այն ամենը, ինչ ժամանակի թուրք պատմագրությունը ներկայացրել (և ներկայացնում է) որպես սխալ, խիզախություն ու հերոսություն, ըստ էության եղել է մեծագույն չարիք։ Օսմանյան սուլթանները վարել են նվաճողական պատերազմներ, կազմակերպել կոտորածներ, մանկաժողովներ, ռենգաղթներ, ավերել են, կոտորել ու գերեվարել... նրանց իշխանության տակ գտնված հայերը, հույները, հրեաները և այլ ժողովուրդներ ենթարկվել են կրոնական դժնի հալածանքների ու վայրագ բռնությունների, ցեղասպանության։ Քյոմուրճյանի երկն ունի պատմաճանաչողական մեծ արժեք և կարևոր սկզբնաղբյուր է թուրքիայի և հարևան երկրների, հատկապես հայության արևմտյան հատվածի պատմության համար։

«Պատմութիւն Համառօտ...»-ը օժտված է նաև գրական-գեղարվեստական արժանիքներով։ Իր խոսքը հետաքրքիր ու տպավորիչ դարձնելու համար հեղինակը գործի է գրել պատկերավորման ու արտահայտչական բազում միջոցներ, երբեմն մեջ է բերել բանավոր աղբյուրներից քաղված որոշ զրույցներ, ստեղծել կենդանի երկխոսություններ, որոնց շնորհիվ երկը ձեռք է բերել վիպական շունչ։ Բանաստեղծը երբեմն, հատկապես հայությանը վերաբերող հատվածներում, դրսևորել է իր հուզական վերաբերմունքը, արտահայտել իր կարեկցանքը, հույսը, սրտմտությունը։ Ըստ այդմ ստեղծվել է պատմահայրենասիրական բանաստեղծության մի ինքնատիպ օրինակ։

Հիշարժան է հատկապես Պատմության այն հատվածը, ուր պատկերված է Մուհամմեդ II-ի կողմից 1453 թ. Կոստանդնուպոլսի առումը և Բյուզանդական պետության կործանումը։ Նկարագրելով այս իրողությունը, հեղինակն սկսում է ողբալ, հետևելով հայ պատմաոլորի ժանրային իմաստով երեք սկզբնաղբյուրներին։ Երեմիա մարգարեի՝ Երուսաղեմի ողբին, Մովսես խոսնացու՝ Հայաստանի ողբին և Ներսես Շնորհալու՝ Եդեսիայի ողբին։ Քյոմուրճյանը ոչ միայն ողբացել է, այլև ներքին բավականությամբ պատկերել թուրքական հրոսակների կրած պարտությունները, արտահայտել նրանց դեմ մարտնչող քրիստոնյա զորքերի հանդեպ իր ջերմ համակրանքը։ Այսպես, նկարագրելով Սենտ-Գոթարի ճակատամարտը (1664), նա գրում է, թե ինչպես հուզված են եղել

ժայթքեցան միազումարք՝

դասք սրբունթաց վերայ հասեալ,

Ահ և երկիւղ եկն ի վերայ

Տաճկաց, որք յետս եղեն փախեալ25։

Իր մարտական ոգով ու հայրենասիրական շնչով Երեմիա Չելեպիի «Պատմութիւն Համառօտ...»-ը զարթոնքի շրջանի հայ գրականության ամենաբնորոշ երկերից է։ Այդպիսին է նաև նրա «Ստամպուլոյ պատմութիւնը»։ Սա պատմագեղարվեստական բնույթի մի ընդարձակ չափածո տարեգրություն է, որտեղ պատկերված է XVII դարի Պոլիսն իր սոցիալ-տնտեսական կյան-

25 Երեմիա Քեօմուրճեան. Պատմութիւն Համառօտ Դժ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրությամբ Ժ. Ավետիսյանի. Երևան, 1982, էջ 271։

բով, կենցաղով, սովորություններով, էթնիկական կազմով, մեծ ու փոքր կառույցներով: Այստեղ էլ իր խոսքը հետաքրքիր դարձնելու համար հեղինակը մեջ է բերել որոշ զրույցներ, լեզենդներ, զավեշտական պատմություններ, փաստերը շարադրել պատկերավոր լեզվով: Այս երկում էլ հեղինակը բազմիցս անդրադարձել է իր հայրենակիցներին, ցույց տվել նրանց հայաժական վիճակը, որի պատճառով հայերը ստիպված հավատափոխ էին լինում կամ դիմում պանդխտության: Ժողովրդի լուսավորության նախանձախնդիր բանաստեղծին մեծ ցավ է պատճառել պոլսահայ կրթական-մշակութային կյանքի խափանումը, որի բուն պատճառը նա լավ է գիտակցել.

Մեղ ու մէղրէսէք պիտոյթ՝
Քանդի մերս որ խափանեցան,
Յաւ է մեզ դայլոց դիտել՝
Անդլուխ ազգ մեր՝ ւ անիշխան²⁶,

Բանաստեղծը ներքուստ փայփայել է օսմանյան բռնապետության տակ տառապող հայության, այլև մյուս ժողովուրդների ազատագրման գաղափարը:

Ուշադրության է արժանի նաև Քյոմուրճյանի այն պոեմը, որտեղ հյուսված է ալբանացի քրիստոնյա Տիմոյի և հրեուհի Մրգատայի սիրո պատմությունը: Այստեղ հեղինակի հիմնական նպատակն է եղել ցույց տալ քրիստոնեական կրոնի առավելությունը և արտահայտել իր հակաթուրքական տրամադրությունները:

Երեմիա Չելեպին համակիր է եղել կաթողիկոս Հակոբ Զուղայեցու՝ Հայաստանի ազատագրման քաղաքական ծրագրերին և որոշ հույսեր է կապել եվրոպական հզոր տերությունների հետ: Այս դիրքերից ելնելով, նա ներբողներ է ձոնել լեհաստանի թագավոր Յան Սոբեսկուն, ապա նաև Ֆրանսիայի միապետ Լյուդովիկոս XIV-ին: Քյոմուրճյանը ներբողական ուղերձներ է հղել նաև հայ աշխարհիկ ու հոգևոր դասի մի շարք երեկի ներկայացուցիչներին: 1680 թ. նա մի դամբանական գանձ է հորինել Հակոբ Զուղայեցու մասվանառությամբ: Այստեղ արձանագրելով հայկական պետականության վերացման փաստը, բանաստեղծը զարգացնում է այն միտքը, թե քաղաքական անազատության պայմաններում ժողովրդի պահպանմանը մեծապես նպաստել ու նպաստում են նրա լուսավորյալ հոգևոր առաջնորդները: Որպես օրինակ նշվում է ժամանակի վերջին երեք կաթողիկոսների՝ Մովսես Տաթևացու, Փիլիպպոս Աղբակեցու և Հակոբ Զուղայեցու գործունեությունը: Այս դամբանական գանձը, քաղաքական լուսավորական և ազգային-եկեղեցական միասնության առաջավոր գաղափարներ, ծայրեծայր համակված է հայրենասիրական շնչով ու լավատեսական ոգով:

Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը, Լեոյի բնորոշմամբ, «հանդես է գալիս իբրև մի նոր պատմական տիպ, որին պատկանում էր ապագան: Դա մեզ հայտնի առաջին աշխարհական կրթված հայն էր, առաջին ինտելիգենտ հայն էր, որ ազդում էր ազգային կյանքի վրա, հանրային կարծիք էր ստեղծում և ղեկավարում... հանձին նորա մենք կարող ենք ողջունել առաջին հայ գրողին, որ կրում է իր մեջ նոր ժամանակների, եվրոպական հասկացողություններ, գրական ճաշակ և պահանջներ»²⁷:

Քյոմուրճյանը և դարի ազգային հայրենասիրական բանաստեղծության մյուս նշանավոր ներկայացուցիչները, ըստ էության, նախապատրաստեցին հաջորդ հարյուրամյակի հայ ազգային-դասական քերթությունը, որը մի նոր որակ էր հայկական գաղափարաբանության և հայ գրական-գեղարվեստական մտքի ասպարեզում:

²⁶ Երեմիա Քեօմուրճեան. Ստամբուլի պատմություն. Վիեննա, 1913, Ա, էջ 114-
²⁷ Լեո. Երկերի ժողովածու. հ. 3, գիրք 1, Երևան, 1969, էջ 358:

АРМЯНСКАЯ НАЦИОНАЛЬНО-ПАТРИОТИЧЕСКАЯ ПОЭЗИЯ XVII ВЕКА

Доктор филол. наук Г. Г. БАХЧИНЯН

Резюме

С первой четверти XVII в. в Армении начинается период экономического и культурного возрождения. Лучшие представители армянского духовенства и купечества, соприкасаясь с цивилизацией Запада, способствуют пробуждению в народе национального самосознания, стремления к национальному освобождению. Откликаясь из требования времени, художественная литература этого периода в той или иной мере выражая идеологию национально-освободительных движений, стала одним из основных рычагов культурно-образовательного процесса. Ведущим направлением в литературе стала национально-патриотическая поэзия, которая воссоздавала и своеобразно продолжала традиции армянской средневековой духовной и историко-политической поэзии. В национально-патриотической поэзии выделяются произведения религиозные, национально-церковные и историко-политические. Видными ее представителями являются Нерсес Мокаци, Мартирос Крымеци, Еремия Кеомурджян, в произведениях которых в различных художественных формах воскрешались патриотические идеи и национально-освободительные стремления армянского народа.